Արձանագրություն N 6

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տվյալների պահոցների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

21 փետրվարի 2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գալուստ Գալստյանը, անդամներ՝ Զավեն Աղաջանյանը, Սերգեյ Ավագիմյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6 ծածկագրով գնման ընթացակարգի ընթացակարգով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 30.01.2025թ. վճիռի ուսումնասիրման և ընթացակարգը շարունակելու մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գալուստ Գալստյանը նիստը հայտարարեց բացված:

Հանձնաժողովի քարտուղար Սպարտակ Հարությունյանը ներկայացրեց 20.02.2025թ. իրավաբանական վարչությունից գրությամբ տացված թիվ ԵԴ2/10318/02/24 գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 30.01.2025թ. վճիռը (կցվում է), համաձայն որի՝ դատարանը քննելով «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2024թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումը՝ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու, հայտի ապահովման գումարը գանձելու, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք հայտը գնման ընթացակարգի /մրցույթի/ պայմաններին բավարար գնահատելու և վերջինիս՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչելու պահանջների մասին, վճռել է հայցը բավարարել: Անվավեր ճանաչել թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2024թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումը՝ կապված ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու, հայտի ապահովման գումարը գանձելու, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հետ: «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊ ընկերության հայտը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված և «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊ ընկերությանը թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչել:

Ի գիտություն ընդունելով վճիռը և նկատի ունենալով, որ այն օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և դրա կատարումն ապահովելու համար, ինչես նաև հաշվի առնելով, որ ընթացակարգը կազմակերպված է եղել էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով, և այն հայտարարվել է չկայացած, որի արդյունքում էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգի կարգավիճակը չկայացած է, և հանձնաժողովը չունի գործիքակազմ «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ի հայտը վերագնահատելու և ընթացակարգի հետագա ընթացքն ապահովելու համար

հանձնաժողովը որոշեց

-«ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ի հայտը վերագնահատելու գործիքակազմ ստանալու և աճուրդի հետագա ընթացքն ապահովելու (էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգի կարգավիճակը «դիմում հայտարարության շտկման գնահատում» դարձնելու) հա մար ընթացակարգը կասեցնել և դիմել լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարություն):

-Հահանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել լիազոր մարնից տեղեկատվություն ստան ալու հաջորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Գալուստ Գալստյան

անդամներ _____ Զավեն Աղաջանյան

_____ Սերգեյ Ավագիմյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան